

## Գործողությունների ուղեցույց և հանձնաժողովի ստեղծում

«Գլենդել Հիլզ» գործողությունների ուղեցույց, իսկ Գյումրու քաղաքապետն էլ հանձնաժողով է ստեղծել

«Գլենդել Հիլզ» Գյումրու Մուշ-2 նորակառույց թաղամասի բնակիչների բարձրացրած հարցերի լուծման նպատակով գործողությունների իրականացման հերթականության ուղեցույց է հրապարակել, իսկ Գյումրու քաղաքապետն էլ թաղամասի բնակեցմանը խոչընդոտող խնդիրների ուսումնասիրման նպատակով՝ փոխքաղաքապետի ղեկավարությամբ հանձնաժողով է ստեղծել: Նշենք, որ այդ քայլերը ձեռնարկվեցին այն ժամանակ, երբ **«Շիրակ կենտրոնը» Գյումրու Մուշ-2 նորակառույց թաղամասի բնակեցումն արագացնելու նպատակով անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու խնդրի մասին դիմում-ուղերձ հղեց ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանին և քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանին:** Նորակառույց թաղամասի բնակեցման գործընթացում ի հայտ եկած զգալի խոչընդոտների վերացման անհրաժեշտության մասին **դիմում-ուղերձում** մասնավորապես ասվում էր. «Շիրակին առանձնահատուկ մոտալուտ ցրտաշունչ ձմռանը նորակառույց թաղամասն առավել դժվար, եթե չասենք գրեթե անհնար կլինի բնակեցնելը, իսկ ձմռանը նորակառույց բնակարաններն առանց բնակեցման թողնելն իր հերթին կբերի ծանր հետևանքներ: Ուստի բնակարան ստացած ընտանիքների՝ տնակներից նոր բնակարաններ տեղափոխումն արագացնելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է հրատապ լուծել հետևյալ խնդիրները.

Բնակարաններն ապահովել անխափան ջրամատակարարմամբ:

Կառուցապատումն իրականացնող «Գլենդել Հիլզ»-ին պետք է պարտադրել, որ վերջիններս տրամադրեն շինարարական բավարար աշխատուժ և նորակառույց բնակելի շենքերում առկա թերություններն ու բացթողումները կարճ ժամանակամիջոցում վերացնեն:

Գյումրու քաղաքապետարանն էլ պետք է նորակառույց թաղամասը քաղաքի կենտրոնին կապող նոր երթուղային՝ ավտոբուսային միջոցներով ապահովի»:

Ի դեպ երկու օր է ինչ Մուշ-2 թաղամասում նկատվում է աշխուժություն՝ իրականացվում են շինարարական խոտանի վերացման, ջրամատակարարման, գազամատակարարման համակարգերի միացման աշխատանքներ: Մարզային հեռուստատեսություններով էլ պարբերաբար հեռարձակվում են «Գլենդել Հիլզի» գործողությունների իրականացման ուղեցույցի և Գյումրու քաղաքապետի ստեղծած հանձնաժողովի մասին հայտարարությունները՝ բողոքներ ունեցող բնակիչներին հորդորելով դիմել իրենց:

Առիթն օգտագոծելով Գյումրու քաղաքապետարանի նորաստեղծ հանձնաժողովին ՏԻՄ-ի լիազորությունների մեջ մտնող և բնակարանամուտի արագացմանը նպաստող երկու առաջարկություն էլ մենք մեր կողմից ենք ներկայացնում: Բնակբաշխման այս փուլով բնակարաններ ստացան նաև հարյուրավոր միայնակ ծեր, հաշմանդամ քաղաքացիներ, բազմանդամ, սոցիալապես ծանր պայմաններում ապրող

ընտանիքներ, որոնց համար ոչ միայն բնակության անհրաժեշտ պայմանների ինքնուրույն ապահովումն է անմատչելի, այլ նաև դժվար է ժամանակավոր կացարաններից սեփական ուժերով տնային իրերի տեղափոխումը նոր բնակարաններ, ուստի առաջարկում ենք.

1. անապահով ընտանիքներին տնակներից նոր բնակարաններ տեղափոխվելու խնդրում աջակցություն ցուցաբերել: Անշուշտ տեղին կլինեն, եթե Գյումրիում գործող բուհերի ղեկավարները ևս հորդորեին իրենց ուսանողներին, որ նրանք օգնեին միայնակ ծերերի տնային իրերի տեղափոխմանը:

2. Մուշ-2 թաղամասը քաղաքի կենտրոնին կապող երթուղային տաքսիներից բացի գործարքել նաև ավտոբուսային երթուղի: Առաջին մեկ-երկու ամիսը նորակառույց բնակարաններ տեղափոխվող բնակիչներին այդ ավտոբուսներով սպասարկել անվճար:

Վերջում ուզում ենք վստահեցնել, որ այսուհետ ևս հետամուտ կլինենք, որպեսզի Մուշ-2 թաղամասում տիրող վիճակի մասին տեղեկատվությունը դառնա հանրության սեփականությունը:

**«Շիրակ կենտրոն» ՀԿ**